# «ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ՀՕ-97 օրենքի (այսուհետ՝ Օրենք)

**Հոդված 2.** Օրենքի 29-րդ հոդվածում «Հանձնաժողովի աշխատակազմ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել Հանձնաժողով բառով՝ համապատասխան հոլովաձևերով:

**Հոդված 3.** Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 4.** Օրենքի 40-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 7-րդ կետում «աշխատակազմի ընդհանուր» բառերը փոխարինել «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով պետական մարմնի» բառերով.

2) 1-ին մասի 8-րդ կետից հանել «աշխատակազմի» բառը:

**Հոդված 5.** Օրենքի 44-րդ հոդվածի՝

ա) 5-րդ մասում «աշխատակազմի ղեկավարը» բառերը փոխարինել «գլխավոր քարտուղարը» բառերով.

բ) 11-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

Հանձնաժողովի նիստերը արձանագրվում են.

գ) 11-րդ մասի 4-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

հետևյալ բովանդակությամբ.

«Հանձնաժողովում վարվում է Հանձնաժողովի որոշումների գրանցամատյան:»:

**Հոդված 6.** Օրենքի 45-րդ հոդվածի՝

1) վերնագրում «աշխատակազմը» բառը փոխարինել «կառուցվածքային ստորաբաժանումները» բառերով.

2) 1-ին մասի 1-ին նախադասությունում «աշխատակազմի» բառը փոխարինել «կառուցվածքային ստորաբաժանումների» բառերով.

3) 2-րդ մասից հանել «աշխատակազմի» բառը:

**Հոդված 7.** Օրենքի 45.1 հոդվածի 19-րդ մասում «Հանձնաժողովի աշխատակազմը» բառերը փոխարինել «Հանձնաժողովը՝ կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով» բառերով:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: